ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՒԶՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1895—1900 ԹԹ.

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

XIX դարի 90-ական թթ. կեսից ազատագրական շարժումները Ռուսաստանում թևակոխեցին իրենց զարգացման պրոլետարական շրջանը։ Ինքնակալության բռնությունների դեմ արդյունաբերական կենտրոնների հետ ըմբոստացավ նաև գյուղը։ Ռուս գյուղացիների դասակարգային պայքարի աճին նպաստեց տարագնացությունը, երբ ապրուստ հայթայթելու համար նրանք թափառում էին քաղաքից-քաղաք կամ արդյունաբերական կենտրոնից-կենտրոն և շփվելով պրոլետարական զանգվածների հետ, յուրացնում էին նրանց հեղափոխական տրամադրություններն ու վերադառնալով գյուղ, տարածում դրանք իրենց համագյուղացիների մեջ։ Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ ճորտատիրական իրավունքի վերացումից հետո «նստակյաց, ընկճված, յուր գյուղին կառչած, տերտերներին հավատացող, «մեծավորից» վախեցող ճորտ գյուղացու փոխարեն հասունանում էր գյուղացիների նոր սերունդ, որոնք եղել էին արտագնաց զբաղմունքներում, քաղաքներում, սովորել էին մի որոշ բան թափառական կյանքի ու վարձու աշխատանքի դառը փորձից»[1]։ Դարավերջին ռուս գյուղացիների դասակարգային պայքարը շարունակում էր ծավալվել ամենատարբեր ձևերով և ընդգրկում ավելի մեծ գյուղացիական զանգվածներ։ Կենտրոնից զատ գյուղացիական ելույթներն ակտիվանում են նաև կայսրության ծայրամասերում, մասնավորապես Ուկրաինայում, Մերձբալթիկայում, Պովոլժիեում ու Անդրկովկասում։

XIX դարի 90-ական թթ. վերջերին գյուղացիական շարժումները որոշ չափով աշխուժացան նաև Արևելյան Հայաստանում[2]. դա պայմանավորված էր գյուղացիության տարագնացության զարգացումով, հետզհետե խորացող սոցիալական շերտավորմամբ, ցարիզմի հարկային հարստահարության սաստկացումով, 1892—1894 թթ. անբերրիության ու սովի ծանր հետևանքներով և այլ հանգամանքներով։ Գյուղացիները շարունակում էին պայքարել ինչպես ցարական իշխանությունների, տեղական հողատերերի ու հոգևորականության, այնպես էլ գյուղի կուլակության դեմ։ Նրանց պայքարը շարունակում էր ընթանալ տարբեր ձևերով և դրսևորվել պասիվ ու ակտիվ եղանակներով։ Գյուղացիները պայքարում էին ամենից առաջ հողի համար։ Նրանք պահանջում էին վերադարձնել իրենց այն հանդակները, որոնք տարբեր պատրվակներով բռնագրավված էին իշխանությունների կողմից և դարձված արքունական եկամտի աղբյուր։ 1895 թ. մայիսին Սուրմալուի գավառի Արալբիս-Բաշքենդ

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 88—89։

2 Արևելյան Հայաստանի 90-ական թվականների գյուղացիական շարժումների մասին տե՛ս Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Բ, Երևան, 1968, էջ 220—230։

գյուղի բնակիչները նահանգապետին գրում էին, որ մեկ տարի առաջ Երևանի նահանգի ու Կարսի մարզի պետական ունեցվածքների վարչությունը իլեր է իրենց բարերեր հողերից 40 դեսյատին և, դարձնելով հասույթաբեր հող, վարձակալությամբ տվել Երևանում ապրող իրենց համագյուղացիներից մեկին։ Նրանք պահանջում էին վերադարձնել այդ հողամասը։ Սակայն նահանգապետը նրանց պահանջը թողնում է անհետևանք[3]։ 1897 թ. նման խնդրագրով նահանգապետին դիմեցին նաև Ալեքսանդրապոլի գավառի Յաղուբլի գյուղի բնակիչները։ Նրանք նշում էին, որ իրենք առանց այդ էլ տառապում էին սակավահողությունից, իսկ պաշտոնյաները, բռնագրավելով իրենց հողերը, ավելի վատթարացրել են դրությունը։ Այս խնդրագիրը նույնպես մատնվեց անուշադրության[4]։ 1898 թ. ապրիլին իշխանությունների թալանչիական գործողությունների դեմ բողոքում են նաև Նոր Բայազեդի գավառի Ներքին Ալուչալու գյուղի բնակիչները։ Նշելով, որ իրենց գյուղի բնակիչների թվաքանակը մեծացել է, բայց հողային տարածությունները մնացել են անփոփոխ ու դրա պատճառով իրենք ընկել են ծանր կացության մեջ, նրանք պահանջում էին վերադարձնել իշխանությունների խլած հողերը։ Գոհացում չստանալով, նույն թվականի հունիսին գյուղացիները նոր խնդրագիր ուղարկեցին նահանգապետին, բայց վերստին մնացին անպատասխան[5]։

Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններում, որտեղ բնակչության աճի հետևանքով բաժնեհողերը փոքրացել էին, գյուղացիները դիմում էին ցարական պաշտոնյաներին և պահանջում լրացուցիչ հողամասեր, ընդ որում նրանք այդ հարցը բարձրացնում էին սովորաբար այն դեպքում, երբ գիտեին, որ կան պետական ազատ հողեր և հնարավոր է բավարարել իրենց պահանջը։ Դեռ 1894 թ. Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Քյափանակ գյուղի բնակիչները նահանգապետին գանգատվում էին, որ իրենց գյուղն արդեն բաղկացած է 250 ծխից (2600 շնչից), իսկ հող ունեն այնքան, որքան 50 տարի առաջ և դրա հետևանքով ընկել են ծանր կարիքի մեջ։ Նրանք խնդրում էին լրացուցիչ բաժնեհող։ Բավարարում չստանալով, 1895, 1896 և 1897 թթ. գյուղացիները նորից դիմեցին նահանգապետին, բայց արդյունքի չհասան[6]։ 1894—1896 թթ. նման պահանջներով իշխանություններին դիմեցին նաև Նոր Բայազեդի գավառի Դյասման գյուղի բնակիչները։ Թեև նույնիսկ պաշտոնյաներից ոմանք ստիպված խոստովանեցին այս գյուղի սակավահողությունը, բայց նահանգապետը անհետևանք թողեց գյուղացիների պահանջները[7]։ 1895 թ. մայիսին լրացուցիչ բաժնեհողի խնդրագրով նահանգապետին դիմեցին նաև Երևանի գավառի Մամադ-Աբադ գյուղի բնակիչները (8 տնտեսություն կամ 50 հոգի), որոնք ունեին ընդամենը 14 դեսյատին վարելահող և պահանջում էին իրենց տալ գյուղի շրջակայքում ընկած 52 դեսյատին պետական հողամասը։ Գոհացում չստանալով, գյուղացիները շարունակեցին խնդրագրեր ուղարկել նաև հետագա տարիներին։ Ի վերջո՝ 1900 թ. նահանգապետը պատասխանեց, որ մամադաբադցիները իրենց մատնանշած պետական հողամասը կարող են վերց-

---

3 ՏԼԿ Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ցուց. 5, գ. 454, թ. 3։
Նույն տեղում, գ. 648, թթ. 3—4։
5 Նույն տեղում, գ. 852, թթ. 3—7։
6 Նույն տեղում, գ. 141, թ. 12։
7 Նույն տեղում, գ. 168, թ. 5։

նել միայն վարձակալությամբ, այն էլ մասնակցելով աճուրդին[8]։ 1898 թ. մարտի 25-ին լրացուցիչ բաժնեհողի պահանջով հանդես եկան նաև Երևանի գավառի Նորաղուզ գյուղի բնակիչները։ Կառավարչապետին հղած իրենց խնդրագրում նրանք նշում էին, որ այդ հարցով «մենք բազմիցս դիմել ենք ձեզ, բայց մինչև հիմա չենք ստացել մեր օգտին խոսող որևէ պատասխան»[9]։ Նշված գյուղերից բացի, 1890-ական թթ. երկրորդ կեսին իշխանություններից լրացուցիչ բաժնեհող պահանջեցին նաև Երևանի գավառի Թորփահիկալա, Սարջալար, Ալեքսանդրապոլի գավառի Աջիմքար, Նոր Բայազեդի գավառի Ղանլի-Ալահվերդի, Քյարկիմբաշ, Ատամխան և այլ գյուղերի բնակիչները, բայց նրանց մեծ մասը մերժում ստացավ[10]։

Այս ամենի հետևանքով գյուղացիները հաճախ ցանկություն էին հայտնում թողնել իրենց բնակավայրերը և տեղափոխվել նոր շրջաններ, մասնավորապես Կարսի մարզը, հույս ունենալով, որ այստեղ ձեռք կբերեն ընդարձակ տարածություններ։ Ուստի դիմում էին ցարական իշխանություններին և խնդրում տեղափոխման թույլտվություն։ 1895 թ. նահանգապետին այդպիսի խնդրագիր ներկայացրեցին Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Ջամուշլու, 1896 թ.՝ նույն գավառի Հոքամ, Միրաք, 1897 թ.՝ Նոր Բայազեդի գավառի Ծամաքաբերդ գյուղերի բնակիչները[11]։ Սակայն իշխանությունները մերժում էին նրանց, հայտարարելով, որ տեղացիների վերաբնակեցումը Կարսի մարզում կառավարության կողմից արգելված է[12]։ Որոշ շրջանների բնակիչներ ցանկություն էին հայտնում տեղափոխվել Երևանի գավառի ցածրագիր շրջանները, մասնավորապես Սարդարաբադի տափաստանը և Ելիսավետպոլի նահանգը։ Այդպիսի խնդրագրեր ներկայացրեցին 1895 թ. Նոր Բայազեդի գավառի Վերին Ախտայի, 1896 թ.՝ Ալեքսանդրապոլի գավառի Քոռ-Աղբյուր և այլ գյուղերի բնակիչները։ Սակայն իշխանությունները նրանց նույնպես մերժեցին, պատճառաբանելով, որ չկան ազատ ու հարմար տարածություններ[13]։

Այլ ելք չգտնելով, գյուղացիները անցնում էին ակտիվ գործողությունների և բռնագրավում պետական հողերը։ Այդպես վարվեցին, օրինակ, Մեծ Ղարաքիլիսայի բնակիչները, որոնք տարբեր ժամանակներում արքունական կալվածքներից զգալի տարածություն բռնագրավեցին և իշխանություններին հարկադրեցին ճանաչել այն որպես լրացուցիչ բաժնեհող[14]։

Նման քայլի դիմեցին նաև Էջմիածնի գավառի Կիրաշլու գյուղի բնակիչները, որոնց մի մասը, հաստատվելով պետական հողերի վրա, դարձրեց դրանք իր համայնական սեփականությունը։ Բնորոշ է, որ ցարական իշխանությունները 1896 թ. փորձեցին նրանց վերադարձնել իրենց հին բնակավայրը, սակայն հանդիպեցին գյուղացիների համառ դիմադրությանը։ Հետագա տարիներին իշխանությունները մի քանի անգամ էլ կրկնեցին այդ փորձը, արգելելով գյուղացիներին դուրս գալ դաշտային աշխատանքի, անգամ կրն-

8 Նույն տեղում, գ. 282, թ. 34։

9 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 12, ցուց. 10, գ. 796/844, թ. 1։

10 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ցուց. 5, գ. 289, թ. 11, գ. 298, թ. 10, գ. 322, թ. 3, գ. 501, թ. 3, գ. 517, թ. 3։

11 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ցուց. 5, գ. 340, թ. 8, գ. 525, թ. 9, գ. 458, թ. 5, գ. 613, թ. 1։

12 Նույն տեղում, գ. 340, թ. 8, գ. 613, թ. 1։

13 Նույն տեղում, գ. 223, թ. 31, գ. 613, թ. 1, գ. 440, թ. 13, գ. 458, թ. 5։

14 Նույն տեղում, գ. 265, թ. 5։

քելով նրանց տների դռները, բայց գյուղացիները ջարդեցին կնիքները և շարունակեցին մնալ իրենց գրված տերիտորիայում։ Խուսափելով բարդություններից ու հնարավոր արյունահեղությունից, 1901 թ. նահանգապետը կարգադրեց առժամանակ հանգիստ թողնել Կիրաշլուի նորաբնակներին[15]։

Արքունական հողերի գրավումը գյուղացիության կողմից 1890-ական թթ. վերջերին գգալի չափերի հասավ։ 1896 թ. Երևանի նահանգի ու Կարսի մարզի պետական ունեցվածքների վարչության տատուկ հանձնարարությունների պաշտոնյան իր զեկուցագրում նշում էր, որ «պետական ձմեռային արոտավայրերի օգտագործման բնագավառում ոչ մի կարգ չկա։ Մի դեպքում այդ արոտավայրերի վարձակալները, գերազանցապես ազդեցիկ կուլակները հափշտակում են հարևան գյուղացիների բաժնեհողերը, իսկ մի այլ դեպքում, ընդհակառակը, հարևան գյուղացիներն են գրավում պետական ձմեռային արոտավայրերը»[16]։ Այնուհետև այդ պաշտոնյան նշում էր, որ նահանգի 55 կտոր պետական ձմեռային արոտավայրերից, որոնց տարածությունը հասնում է 36041 դեսյատինի, 1895 թ. մասնավոր անձինք ու գյուղական համայնքները գրավել են 5098 դեսյատին կամ 14 տոկոսը[17]։ Գյուղացիների կողմից արքունական հողերի գրավումը ավելի կամ պակաս չափով տեղի էր ունենում նաև երկրի այլ շրջաններում։

Արևելյան Հայաստանի գյուղացիները 1890-ական թթ. վերջերին շարունակում էին պայքարել նաև ցարիզմի հարկային հարստահարության դեմ։ Շատ հաճախ նրանք իշխանություններից խնդրում էին հետաձգել հարկերի գանձումը, քանի որ անկարող են վճարել դրանք։ 1895 թ. փետրվարին էջմիածնի գավառի Բաբաքիշի գյուղի բնակիչները նահանգապետին գրում էին, թե գյուղապետն ու նրա գործակալները, կատարելով պրիստավի կարգադրությունը, դաժան միջոցների էին դիմում հարկերը հավաքելու համար և խնդրում էին գոնե երկու ամիս ժամանակ տալ, որովհետև այնպես են աղքատացել, որ «անկարող են հիմա եթե վճարել տուրքերը»։ Նահանգապետը կատարեց նրանց խնդրանքը[18]։ Հարկերի մուծման ժամկետի երկարաձգման հարցով նահանգապետին դիմեցին նաև էջմիածնի գավառի Ափնա (1895), Երևանի գավառի Ջարաչալու և Յամանչալու (1896), Ալեքսանդրապոլի գավառի Մոլլա Գյոկչա (1897), Նոր Բայազեդի գավառի Կուլալի (1897), Շարուր-Դարալագյազի գավառի Զիվա (1899) և այլ գյուղերի բնակիչները։ Բայց նահանգապետը այդ դիմումների մեծ մասը թողեց անհետևանք կամ ուղղակի մերժեց, համարելով, որ դրանք արժանի չեն ուշադրության[19]։

90-ական թվականների վերջերին, երբ ցարական կառավարությունը ավելացրեց բնակչությունից գանձվող հարկերը, Արևելյան Հայաստանի գյուղացիները համարյա ամենուրեք ընդդիմացան այդ քաղաքականությանը և պահանջեցին իջեցնել դրանք։ Այսպես, 1899 թ. ապրիլին Սուրմալուի գավառի Կազիկլլակ գյուղի բնակիչները նահանգապետին հասցեագրված խնդրագրում նշում էին, որ իրենք մինչ այդ վճարում էին 987 ռուբ. 86 կոպ. հողահարկ ու երկրային հարկ, իսկ այժմ իշխանությունները դրանից զատ պահանջում են

---

15 Նույն տեղում, գ. 473, թ. 93։

16 Նույն տեղում, ֆ. 133, գ. 1922, թ. 42։

17 Նույն տեղում, թ. 43։

18 Նույն տեղում, ֆ. 94, ցուց. 5, գ. 240, թ. 3։

19 Նույն տեղում, գ. 259, թ. 4, գ. 419, թթ. 1—2, գ. 594, թ. 4, գ. 702, թթ. 4—5։

նաև 837 ռուբ. 26 կոպ.։ «Ինչո՞ւ, ի՞նչ հիման վրա են մեր հարկերը համարյա կրկնապատկվում»,— հարցնում էին գյուղացիները և խնդրում չեղյալ հայտարարել ավելացրած գումարը։ Սակայն նահանգապետը մերժեց[20], 1899 թ. ապրիլին նույն հարցով նահանգապետին դիմեցին նաև այդ գավառի Գյուլիջա գյուղի բնակիչները։ Նրանք ցույց էին տալիս, որ անցյալում իրենք վճարում էին սարեկան 382 ռուբ. 70 կոպ., իսկ այժմ իշխանությունները պահանջում են 763 ռուբ. 68 կոպ.։ Հայտարարելով, որ իրենք անկարող են վճարել այդ գումարը, գյուղացիները հրաժարվում էին նոր հարկի վճարումից։ Սակայն նահանգապետը կարգադրեց հավաքել սահմանված ամբողջ գումարը[21]։ Կառավարության հարկային քաղաքականության սաստկացման դեմ բողոքեցին նաև Ալեքսանդրապոլի գավառի Մոլլա Գյոկչա (1899), Սուրմալուի գավառի Փարնաուտ (1900), Երևանի գավառի Գյոյքիլիսա (1900) և այլ գյուղերի բնակիչները։ Մերժելով նրանց բողոքները, իշխանությունները ստիպեցին վճարել թե՛ հին և թե՛ նոր գումարները[22]։

Գյուղացիները հրաժարվում էին նաև ապառքներից, որոնք տարիներ շարունակ կուտակվելով, նրանց համար դարձել էին անտանելի բեռ։ Այդպիսի փորձ կատարեցին, օրինակ, էջմիածնի գավառի Կարգաբազար գյուղի բնակիչները, որոնք դեռ 1894 թ. դեկտեմբերին պահանջեցին նահանգապետից՝ հանել իրենց հարկացուցակից 930 ռուբ. ապառքը, պատճառաբանելով, որ տնտեսապես քայքայվել են և չեն կարող գումարը վճարել։ Պատասխան չստանալով, նրանք պայքարը շարունակեցին նաև հետագա տարիներին։ Ի վերջո, 1896 թ. նահանգապետը կարգադրեց երեք տարով երկարաձգել կարգաբազարցիների ապառքների վճարման ժամկետը[23]։

Ցարական կառավարության հարկային պաշտոնյաները գյուղերից հեռացածների հարկերը պահանջում էին մնացողներից և ունևորների հետ համարյա հավասար հարկի տակ էին դնում նաև ընչազուրկներին։ Գյուղացիությունը բողոքում էր նաև այդ չարաշահումների դեմ։ Այսպես, 1895 թ. մարտին Նոր Բայազետի գավառի Զրուշը գյուղի բնակիչները գրում էին նահանգապետին, որ տեղական ոստիկանական պրիստավը իրենցից պահանջում է գյուղից հեռացած երկու քրդական ընտանիքների տուրքերը և խնդրում էին ազատել իրենց այդ ապօրինի հարկերից, բայց նահանգապետն ու գավառապետը որոշեցին նրանց խնդրագիրը թողնել անհետևանք[24]։ Երևանի գավառի Գյուլթափա գյուղի բնակիչները 1899 թ. դեկտեմբերին գրում էին նահանգապետին, որ իրենց գյուղը անցյալներում ունեցել է 82 տնտեսություն, որոնց կեսը տարբեր ժամանակներում արտագաղթել է, որ գյուղում մնացել է ընդամենը 41 տնտեսություն, մինչդեռ իշխանությունները պահանջում են բոլոր 82 տնտեսությունների հարկերը։ Գյուղացիները հրաժարվում էին վճարել արտագաղթածների հարկերը, սակայն նահանգապետը կարգադրում է գանձել նաև դրանք[25]։

---

20 Նույն տեղում, գ. 1013, թթ. 3—4։
21 Նույն տեղում, գ. 1015, թթ. 1—4։
22 Նույն տեղում, գ. 1102, թթ. 1—5, գ. 1198, թթ. 2—5, գ. 1208, թ. 1։
23 Նույն տեղում, գ. 200, թ. 17։
24 Նույն տեղում, գ. 254, թ. 4։
25 Նույն տեղում, գ. 1144, թթ. 1—2։

1898 թ. հուլիսին Սուրմալուի գավառի Ներքին Ախտա գյուղի չքավորները բողոքում էին նահանգապետին, որ աղքատության պատճառով ստիպված են եղել թողնել երկրագործությունը և զբաղվել հովվությամբ, իսկ հարուստ համագյուղացիները տիրացել են իրենց հողաբաժիններին և նույնիսկ վարձակալությամբ են տալիս դրանք, ստանալով զգալի եկամուտներ։ Չնայած դրան, պաշտոնյաները ստիպում են իրենց վճարել պետական բոլոր հարկերը։ Նրանք հրաժարվում էին այդ կարգադրության կատարումից, սակայն նրանց բողոքը մնաց անպատասխան[25]։ 1900 թ. հունիսին Ալեքսանդրապոլի գավառի Բոգիբենդ գյուղի ընչազուրկները գրում էին նահանգապետին, որ թեպետ իրենք անասուններ չունեն, իսկ հարուստները շատ ունեն, վերջինները հարկադրում են իրենց վճարել բոլոր հարկերը։ Ընչազուրկները պահանջում էին հարկերը սահմանել ըստ անասունների գլխաքանակի և «այդ ճանապարհով աղատել մեզ՝ աղքատներիս հարուստների ուժեղ ճնշումից ու հարկերից»։ Սակայն նահանգապետը մերժեց նրանց, պատասխանելով, որ պետական հարկերը համայնքի տնտեսությունների վրա բաշխվում են իրենց՝ գյուղացիների կողմից[27]։

Չնայած ցարական իշխանությունների կիրառած խստություններին, գյուղացիները, այնուամենայնիվ, հրաժարվում էին հարկերի վճարումից։ Դա ապառքների աճի պատճառներից մեկն էր։ Միայն երկու տարվա ընթացքում (1898—1900 թթ.) այդ ապառքները Երևանի նահանգում 1120796 ռուբ. 89 կոպ. հասան 1291788 ռուբ. 45 կոպ.[28]։

XIX դարի 90-ական թթ. վերջերին Արևելյան Հայաստանի գյուղացիները շարունակում էին պայքարել նաև կալվածատիրական շահագործման ու հարստահարման դեմ։ Նրանք որոշ դեպքերում հրաժարվում էին բահրայի վճարումից և ֆեոդալական պանազան պարտություններ կատարումից։ Այսպես. 1895 թ. դեկտեմբերին Երևանի գավառի Ալիմամեգկշլակ գյուղի բնակիչները հայտարարեցին, որ իրենք չեն ճանաչում հողատիրոջ սեփականատիրական իրավունքները ախչային հողերի նկատմամբ և «մուլք չեն տա»[29]։ Գյուղացիներին հնազանդեցնելու համար հաշտարար միջնորդը ուղարկեց գավառի IV ոստիկանական մասի պրիստավին, որը սպառնաց, թե շինականները, եթե շարունակեն համառել, կզրկվեն իրենց հողատարածություններից։ Սակայն պրիստավի այդ սպառնալիքը չներգործեց գյուղացիների վրա։ Այն ժամանակ հաշտարար միջնորդը դիմեց Երևանի գավառապետին և հայտնեց, որ թեև ինքը մի քանի անգամ փորձել է համոզել ալիմամեդկշլակցիներին, «սակայն չի կարողացել կոտրել նրանց դիմադրությունը»[30]։ Ցարական պաշտոնյաների միջամտությունը չօգնեց հողատիրոջը, և պայքարը շարունակվեց. Վերջապես 1899 թ. դեկտեմբերին կողմերի միջև կնքվեց համաձայնագիր, որով վիճելի հողերի մեծ մասը տրվեց գյուղացիներին, իսկ հողատերը դրանց արդյունքներից մուլք էր ստանալու։ Բացի դրանից, կալվածատերը կարող էր ոռոգող ջրից օգտվել միայն այն ժամանակ, երբ գյուղացիները կավարտեին իրենց

---

26 Նույն տեղում, գ. 1079, թ 3։

27 Նույն տեղում, գ. 1285, թթ. 5, 7։

28 Նույն տեղում, գ. 963, թ. 33, գ. 1340, թ. 37։

29 «Крестьянское движение в Армении в XIX в », составил проф. В. А. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1948, էջ 370։

30 Նույն տեղում, էջ 372։

հանդերի ոռոգումը[31]։ Այսպիսով, համառ պայքարի շնորհիվ գյուղացիները հասան որոշ հաջողության։

1895 թ. ֆեոդալական պարտությունների դեմ նորից հանդես եկան Երևանի գավառի Պտղնի գյուղի բնակիչները։ Նրանք հասան այն բանին, որ 1899 թ. ցարական կառավարությունը Պտղնին ազատեց թիուլական-կալվածատիրական կախվածությունից և համարեց պետական գյուղ[32]։ Դա այսպես թե այնպես թեթևացնում էր նրանց դրությունը։ 1896 թ. փետրվարին միջնադարյան շահագործման դեմ ծառացան նաև Երևանի գավառի Վերին Ղույլասար գյուղի բնակիչները։ Նրանք առաջարկեցին, որ հողատերերը բահրա ստանան միայն իրենց հողերից։ Սակայն հաշտարար միջնորդը այդ առաջարկությունը թողեց անհետևանք[33]։

Երկրի մի շարք շրջաններում գյուղացիները բողոքում էին նաև այն ժամանակ, երբ աղաները գանազան ճանապարհներով փորձում էին բռնագրավել նրանց հողատարածությունները և ենթարկել ֆեոդալական հարստահարման։ Նրանք դիմում էին ցարական իշխանություններին։ Այսպես, 1896 թ. մարտին Երևանի գավառի Կալադիբի գյուղի բնակիչները գրում էին Երևանի նահանգի ու Կարսի մարզի պետական ունեցվածքների լիազորին, որ երկու բեկեր, հաստատվելով իրենց գյուղում, զավթել են իրենց բարեբեր հողերից 5 խալվար և ոռոգման ջուրը։ Նրանք պահանջում էին վերադարձնել այդ տարածությունը մանավանդ որ իրենք «հողի կարիք ունեն»[34]։ Գյուղացիների բողոքը մնաց անպատասխան։ 1896 թ. ապրիլին նույն գավառի Ջիվանդարա գյուղի բնակիչները նահանգապետին ուղղված բողոքագրում նշում էին, որ իրենց գյուղում ինքնագլուխ հաստատված բեկերը, պարբերաբար զավթելով համայնական հողերը, գյուղացիներին ամենածանր վիճակի են հասցրել։ Ջիվանդարացիները պահանջում էին վերաբաժանել ամբողջ հողը ըստ բնակիչների թվի։ Իշխանությունները փորձեցին կատարել այդ պահանջը և դիմեցին Կովկասի կառավարչապետին։ Վերջինս նույնպես տվեց իր համաձայնությունը։ Բայց երբ գործը հասավ հողագործության ու պետական ունեցվածքների մինիստրին, նա կարգադրեց բեկերի օգտագործման տակ եղած հողերը թողնել անձեռնմխելի՝ մինչև Երևանի գավառի գյուղացիների հողաշինարարության իրագործումը[35]։ 1896 թ. բեկական հափշտակումների դեմ բողոքեցին նաև Երևանի գավառի Բայբուրտ գյուղի բնակիչները։

Հաճախ կալվածատիրական գյուղացիները պայքարի պասսիվ ձևերից անցնում էին ակտիվ ձևերին և բռնագրավում մուլքադարների, աղաների կամ բեկերի հողերը։ 1896 թ. մայիսին Երևանի գավառի Զանջիրլու գյուղի բեկերը, դիմելով նահանգապետին, գանգատվում էին, որ գյուղացիները դեռ ութ տարի առաջ սկսել են բռնագրավել իրենց հողերը։ Նրանք նշում էին, որ արյունահեղությունից խուսափելու համար իշխանությունները պետք է կիրառեն վճռական միջոցներ։ 1897 թ. հուլիսին նահանգապետը կարգադրեց սահմանազատել բեկերի ու գյուղացիների վիճելի տարածությունները[36]։

---

31 Նույն տեղում, էջ 373—374։
32 Նույն տեղում, էջ 300—301։
33 Նույն տեղում, էջ 374։
34 Նույն տեղում, էջ 375։
35 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 5, գ. 429, թ. 63։
36 Նույն տեղում։

1897 թ. ապրիլին իրենց հողերը գյուղացիների կողմից բռնագրավելու դեմ գանգատվեցին նաև Երևանի գավառի Աղամզալու գյուղի հողատերերը՝ նշելով, որ գյուղացիները վարում են կալվածատիրական հողատարածությունները, նրանք տեղական իշխանություններից պահանջում էին արգելել աղամզալուցիների այդ գործողությունները։ Հաշտարար միջնորդի և գյուղապետերի միջամտությունը չօգնեց հողատերերին։ Վերջիններս 1899 թ. ստիպված եղան գյուղացիների վարած հողերի դիմաց նրանցից մուլք պահանջել[37]։

Կալվածատիրական գյուղացիները հանդես էին գալիս նաև ոռոգման ջրի համար։ Նրանք բազմաթիվ բողոքագրեր էին ուղարկում իշխանություններին, երբ մուլքադարները և միրաբները բռնագրավում էին նրանց ոռոգման ջուրը և հասցնում նյութական մեծ վնասներ։ 1899 թ. ապրիլին Էջմիածնի գավառի Արզաշար գյուղի բնակիչները գրում էին նահանգապետին, որ իրենց մուլքադարը, հանդիսանալով միաժամանակ միրաբ, հափշտակում է գյուղի ոռոգման ջուրը, որի հետևանքով, նշում էին նրանք, «մեզ պատկանող բոլոր ցանքսերը, այգիներն ու ծառաստանները այրվել են երաշտից, և մենք անվերադարձորեն զրկվել ենք այն ամենից, ինչը հանդիսանում էր մեր գոյության միակ աղբյուրը»[38]։ Գյուղացիները պահանջում էին պատժել մուլքադար-միրաբին։ Պատասխան չստանալով, նրանք մեկ ամիս հետո նույն բովանդակությամբ նոր բողոքագիր ուղարկեցին նահանգապետին, բայց վերջինս նրանց բողոքագրերը կրկին թողեց անհետևանք։ Նույն 1899 թ. ապրիլին Էջմիածնի գավառի Դովրախարաբա գյուղի բնակիչները նահանգապետին գանգատվում էին, որ միրաբը, չարաշահելով իր իրավունքները, զրկում է իրենց ոռոգման ջրից, որի հետևանքով իրենք հարկադրված են ջուր ձեռք բերել հարևան գյուղերի հետ կռվելով և որ ընդհարումները համախ հասնում են մարդասպանության։ Նշելով, որ միրաբի վարքագծի պատճառով իրենց ցանքսերը չորանում են, գյուղացիները պահանջում էին վերջ դնել նրա չարագործություններին։ Սակայն նահանգապետը անուշադրության մատնեց նրանց պահաջը[39]։ Այդ նույն թվականի գարնանը նման պահանջով հանդես եկան նաև Երևանի գավառի Ջիմանքենդ գյուղի բնակիչները, որոնք նույնպես պատասխան չստացան[40]։

XIX դարի 90-ական թթ. վերջերին դասակարգային պայքարը շարունակվում էր նաև վանքապատկան գյուղերում։ Շինականները բողոքում էին իրենց հողերի բռնագրավումների դեմ, հրաժարվում էին Էջմիածնի սինոդի բահրայի վճարումից, փորձում էին գրավել վանքապատկան հողեր և այլն։ Օրինակ, 1898 թ. ապրիլին Նոր Բայազետի գավառի Շահրիզ գյուղի բնակիչները Կովկասի կառավարչապետին ուղարկած խնդրագրում գանգատվում էին, որ Սևանի վանքի միաբանությունը բռնագրավել է իրենց հողամասը և խնդրում էին նրա վերադարձնել այն։ Սակայն կառավարչապետը մերժեց նրանց պահանջը[41]։ Այլ տեղերում գյուղացիները ուղղակի կամ անուղղակի հրաժարվում էին վանքերի օգտին սահմանված վճարումներից։ 1898 թ. սեպտեմբերին, Էջմիածնի սինոդը հաշտարար միջնորդին դիմելով, գանգատվում էր, որ Գեղարդի վանքին մուլք չտալու նպատակով Մեհրաբ-Քյուրդքենդ, Մեհրաբ-Բանաբաշ և

37 Տե՛ս «Крестьянское движение в Армении...», էջ 378—379։

38 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ցուց. 5, գ. 1030, թթ. 1—2։

39 Նույն տեղում, գ. 1024, թթ. 1—13։

40 Նույն տեղում, գ. 1016, թթ. 1—8։

41 Տե՛ս նույն տեղում, ֆ. 94, ցուց. 5, գ. 616, թ. 3։

Մեհրաբլու գյուղերը իրենց վարելահողերը դարձրել են ոյդի և խնդրում էր նրանց նկատմամբ գործադրել գոյություն ունեցող օրենքը[42]։ Մեկ տարի անց՝ 1899 թ. հոկտեմբերին Սևանի վանքի հոգևորականները գանգատվում էին նահանգապետին, որ Գոմաձոր ու Ցամաքաբերդ գյուղերը բացահայտորեն հրաժարվում 'են վանքին մուլք վճարելուց և նույնիսկ ծեծում են հարկահավաք-հոգևորականներին։ Նրանք խնդրում էին օժանդակել Սևանի վանքի մուլքի հավաքմանը և պատժել «օրինազանցներին»[43]։ Հաճախ գյուղացիները բերքի լավ մասն իրենց էին վերցնում, իսկ վատը բաժին էին հանում հոգևորականներին։ Այդպես վարվեցին, օրինակ, էջմիածնապատկան Մաստարա գյուղի բնակիչները։ 1900 թ. օգոստոսի 24-ին հարկահավաք-հոգևորականները գրում էին սինոդին, որ Մաստարայում բերքը շատ է, բայց բահրա ստանալը՝ դժվար։ «Ուրս եկած արդյունքը փոխանակ կալը թողնելու և այնտեղից իրենց պարտքը լրացնելու, կրում են տուն, հավաքում են տականքը. փչացած ցորենի ու գարու հատիկները, ապա առաջարկում են ստանալ։ Այդպիսի դեպքեր պատահեցավ հարյուրավորների հետ։ Ամբողջ գյուղը վճռել էր ապառիկ մի բուռ չտալ, իսկ ներկա տարվա բահրան վճարել այնպես, ինչպես վերն ասված է... Խնդրում ենք շուտափույթ օգնություն, գոնե ժամանակավոր մի ոստիկան, քանի դեռ կալերը վերջացած չեն։ Իսկ եթե հոգևոր բարձրագույն իշխանությունը վերահաս օգնությունը չանի երկու օրից հետո՝ կորած է մեր հույսը և սուրբ աթոռի արդյունքը... Մեր գրությունը վերջնական է և լոկ ճշմարտություն, հակառակ դեպքում պատասխանատու չենք»[44]։ Սինոդը իր գործը հեշտացնելու համար բահրայի հավաքման իրավունքը հաճախ տալիս էր վարձակալությամբ։ Սակայն գյուղացիները հրաժարվում էին նաև կապալառուներին վճարելուց։

1890-ական թթ. վերջերին վանքապատկան գյուղացիների պայքարն ավելի ակտիվորեն դրսևորվեց Վաղարշապատում։ Հայտնի է, որ սինոդը էջմիածնում ունեցած իր հողերի մի մասը սովորաբար աճուրդի էր հանում և տալիս կարճատև վարձակալությամբ, իսկ մյուս մասը տրամադրում էր գյուղացիներին իբրև բաժնեհող։ 1896 թ. փետրվարին վաղարշապատցիները բողոքեցին սինոդի այդ գործունեության դեմ. դիմելով էջմիածնի գավառապետին, նրանք գրում էին, որ սինոդը չի հանդիսանում էջմիածնի հողերի գերագույն սեփականատերը և, հետևաբար, իրավունք չունի նրանց մի մասը վարձակալությամբ տալու։ Գյուղացիները գտնում էին, որ այդ հողերի իսկական տերը Վաղարշապատի բնակչությունն է և որ այդ հողերը պետք է օգտագործվեն այնպես, ինչպես ցանկանում են վաղարշապատցիները։ Իրենց դիմումում նրանք գրում էին. «Չի կարելի թույլ տալ, որ վանքն ունենա Վաղարշապատի գյուղական հասարակությանը պատկանող հողերի հանդեպ այդչափ լայն իրավունքներ, իսկ գյուղի բնակիչները չունենան ոչ մի իրավունք։ Ընդհակառակը, օրենքով գյուղական ժողովն է որոշում հողահանդակների օգտագործման հարցը, և կանոնադրության մեջ չկան ցուցումներ այն մասին, թե ժողովի այդ իրավունքը չի տարածվում վանական հողերում հաստատված գյուղական

42 Տե՛ս «Крестьянское движение в Армении...», էջ 380։

43 Նույն տեղում, էջ 382։

44 Մատենադարան, էջմիածնի սինոդի տնտեսական մաս, թղթապանակ 130, վավերագիր 18, թ. 12։

հասարակությունների վրա»[45]։ Այնուհետև վաղարշապատցիները նշում էին, որ օրենքով «ինչպես պետական, այնպես էլ վանական ու տերունական գյուղերում հասարակական հողերի տնօրինման իրավունքը, առանց որևէ բացառության, պատկանում է գյուղական ժողովին»[46]։ Ելնելով այդ ամենից, գյուղացիները պահանջում էին դավառապետից՝ չեղյալ հայտարարել 1895 թ. վերաբաժանումը, որով իրենց էր տրված էջմիածնի հողերի միայն 1/5-ը, իսկ դրանց 4/5-ը սինոդը պահել էր իր ձեռքում աճուրդի հանելու համար։ Նրանք գտնում էին, որ էջմիածնի բոլոր հողերը, առանց որևէ բացառության, պետք է տրվեն վաղարշապատցիներին և բաժանվեն նրանց միջև ըստ շնչի, իսկ սինոդի տնօրինման տակ չպետք է մնա ոչ մի թիզ հող։

Գոհացում չստանալով, 1896 թ. մարտին գյուղացիները դիմեցին նահանգապետին։ Նրանք խնդիր էին դնում՝ հնարավոր թյուրիմացություններից ու տհաճություններից խուսափելու համար դադարեցնել հողի վերաբաժանումը գյուղում, մինչև կպարզվի վաղարշապատցիների իրավունքի հարցը էջմիածնի հողերի նկատմամբ[47]։ Նահանգապետի հարցումին 1896 թ. հունիսի 19-ին Թիֆլիսի դատական պալատը պատասխանեց, որ ինչպես Վաղարշապատի, այնպես էլ Օշականի, Եղվարդի ու Մաստարայի հողային տարածությունները դրանցված են բացառապես վանքի տիրապետության տակ և տրված են գյուղացիներին իբրև բաժնեհող[48]։ Այդպիսի պատասխան հաղորդեց նաև նահանգապետի հատուկ հանձնարարությունների պաշտոնյան, որը 1897 թ. սեպտեմբերին նշում էր, թե իր հավաքած տեղեկություններով վանքին պատկանող բոլոր հողերը միշտ տնօրինել է սինոդը, որը վաղարշապատցիներին բաժնեհող է տվել ըստ իր հայեցողության[49]։ Նահանգապետը կանգնեց սինոդի կողմը, և գյուղացիները չկարողացան հասնել իրենց նպատակին։

XIX դարի 90-ական թթ. կեսերից արևելահայ գյուղում սոցիալական շերտավորման ուժեղացման հետևանքով նոր ուժով ծավալվեցին դասակարգային հակամարտությունները կուլակության և պրոլետարական ու կիսապրոլետարական զանգվածների միջև։ Պայքարը գնում էր ամենից առաջ և ամենից հաճախ հողի համար։ Կուլակային տնտեսությունները, չուզենալով թուլացնել իրենց դիրքերը, դեմ էին դուրս գալիս համայնական հողերի վերաբաժանումներին, մինչդեռ ընչազուրկ շերտերը ձգտում էին նոր հողաբաժանության, հույս ունենալով, որ կկարողանան հող ձեռք բերել, ընդ որում նրանք պահանջում էին վերաբաժանումը կատարել ոչ թե հարուստների շահերը պաշտպանող «հասիա-չարեք» սկզբունքով, այլ ըստ շնչի։ Իրենց համառությամբ գյուղացիները որոշ դեպքերում հասնում էին վարելահողերի վերաբաժանման։ Սակայն հողաբաժանարարները ընտրված լինելով հարուստներից, շարաշահում էին իրենց իրավունքները և, զրկելով տնտեսապես սակավազորներին ու ընչազուրկներին, հողերի մեծ ու լավ մասը իրենք էին վերցնում կամ տալիս էին իրենց բարեկամներին։ Դրա հետևանքով գյուղում պայքարը վերստին շարունակվում էր և հաճախ հասնում արյունահեղության։ Այսպես. Շարուր-Դարաչաղյաղի դավառի խուչիկ գյուղի բնակիչները դեռ 1888 թ. հողերի վերա-

45 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ցուց. 5, գ. 402, թ. 9։
46 Նույն տեղում, թ. 10։
47 Նույն տեղում, թթ. 19—20։
48 Նույն տեղում, թ. 21։
49 Նույն տեղում, գ. 674, թ. 3։

բաժանում պահանջեցին, բայց դատարանը նրանց պահանջը մերժեց։ 1892 թ. նրանք կրկին բարձրացրին այդ հարցը, բայց վերստին մերժվեցին։ Վերջապես 1894 թ. նրանք հասան իրենց նպատակին, սակայն պարզվեց, որ հողաբաժանարարները, չարաշահելով իրենց իրավունքները, խարդախումներ են կատարել։ Ուստի 1895 թ. սկզբին գյուղացիների մեծ մասը դիմեց Կովկասի կառավարչապետին, խնդրելով խաչիկում նոր և արդար վերաբաժանում անցկացնել։ Բավարարում չստանալով, 1896 թ. նրանք դիմեցին նահանգապետին, պահանջելով «սահմանել գյուղում կարգ ու լռություն, այլապես այժմյան անկարգությունները կհասնեն արյունահեղության»[50]։ Նահանգապետը անուշադրության մատնեց նրանց բողոքը։ Գյուղացիները շարունակեցին պայքարը նաև հետագայում, բազմաթիվ բողոքագրեր ուղարկելով ցարական պաշտոնյաներին։

Հողի վերաբաժանման համար մղվող պայքարը համարյա նույնպիսի վախճան ունեցավ նաև Ալեքսանդրապոլի գավառի Թոմարդաշ գյուղում։ Դեռ 1893 թ. այս գյուղի բնակիչները վարելահողերի վերաբաժանում անցկացրեցին, սակայն պարզվեց, որ հողաբաժանարարները այստեղ նույնպես զբաղվել էին զեղծարարությամբ։ Գյուղացիները սկսեցին բողոքել նրանց վարքագծի դեմ և 1895—1896 թթ. մի քանի գանգատագրեր ուղարկեցին Երևանի նահանգական վարչությանն ու նահանգապետին։ Նրանք նշում էին, թե հողաբաժանարար Ն. Գասպարյանը «իր համար վերցրել է մեծ հողամասեր», «ամբողջ գյուղը խառնում է իրար», չի ենթարկվում գյուղացիների ժողովի որոշումներին։ Գյուղացիները խնդիր էին դնում՝ ազատել իրենց «Նիկոլայ Գասպարովի ավերիչ ճիրաններից, որը մեր գյուղի բնակչությանը այնպես է տիրում, ինչպես նորին կայսերական մեծությունը ամբողջ Ռուսաստանում»[51]։ Նրանք իրենց բողոքը շարունակեցին նաև հետագա տարիներին, բայց ապարդյուն։

Հողաբաժանարարների չարաշահումների դեմ հանդես եկան նաև Ալեքսանդրապոլի գավառի Աղքիլիսա գյուղի բնակիչները։ 1895 թ. նրանք գրում էին, որ իրենց ազնիվ ձևացնող այդ անձինք, կատարելով մի շարք խարդախություններ, «իրենց հարուստ ծանոթներին ու ազգականներին տվեցին շատ հող, քան հասնում էր օրենքով, ընդ որում տվեցին բարձրորակ հողեր, իսկ մնացած շատերին, ընդհակառակը՝ քիչ ու վատորակ հող»[52]։ Այսպես նշելով, որ հողաբաժանարարների գործողություններից ամենից շատ տուժել են գյուղի աղքատները, նրանք պահանջում էին հողերի նոր վերաբաժանում։ Սակայն նահանգապետը նրանց պահանջը ևս թողեց անհետևանք[53]։

1890-ական թթ. վերջերին վարելահողերի վերաբաժանման համար պայքարեցին նաև Ալեքսանդրապոլի գավառի Ավշիբեկ (1898), Հաջինազար-Ղուլի (1898), Ջըլխլար (1898), Արմուտլի (1899—1900), Սվանվերդի (1897), Ցոթուր (1897—1898), Իլխիաբի (1898), Նոր Բայազետի գավառի Երանոս (1898), Նորաշեն (1898), Երևանի գավառի Ավան (1899), Արդաշար (1895—1896), Էջմիածնի գավառի Շիրազլա (1898), Վաղարշապատ (1896—1897), Շարուր-Դարալագյազի գավառի Մալիշկա-Քեշիշքենդ (1895), Սուրմալուի

50 Նույն տեղում, գ. 61, թ. 58։

51 Նույն տեղում, գ. 107, թ. 48։

52 Նույն տեղում, գ. 191, թ. 4։

53 Նույն տեղում, թ. 8։

գավառի Կողբ (1895) և բազմաթիվ այլ գյուղերի աշխատավոր զանգվածները[54]։ Սակայն ցարական իշխանությունները համարյա բոլոր վերոհիշյալ գյուղերի աշխատավորների պահանջները մերժեցին։

Պետք է նշել, որ երկրի որոշ վայրերում վարելահողերի վերաբաժանման համար պայքարում էին ոչ թե պրոլետարական ու կիսապրոլետարական զանգվածները, այլ ունևոր ու կուլակային տարրերը, որոնք ձգտում էին վերաբաժանման միջոցով տիրանալ համայնքների ընդարձակ ու բարեբեր հանդակներին։ Այդպիսի դեպքերում աշխատավոր գյուղացիությունը անգեն էր դալիս վերաբաժանման դեմ։ Այսպես օրինակ, 1895 թ. սեպտեմբերին Երևանի գավառի Իմանշանլու գյուղի բնակիչները գրում էին նահանգապետին, որ գյուղապետը, նրա տեղակալն ու նրանց մարդիկ, ցանկանալով ձեռք բերել գյուղի լավ հողերը, անընդհատ պահանջում են անցկացնել վարելահողերի վերաբաժանում, «սակայն մեր հասարակությունը լավ գիտենալով նրանց իսկական նպատակները, չի համաձայնվում»[55]։ Այնուամենայնիվ, 1898 թ. հարուստները իրագործեցին իրենց ցանկությունը և ոմանց տվեցին 17—18, իսկ մյուսներին՝ 12—13 խալվար վարելահող։ Դրա հետևանքով գյուղում ներհակությունները ավելի սրվեցին։ Գյուղացիները գտնում էին, որ այդ վերաբաժանումն անարդար է և պահանջում էին այն վերացնել։ Սակայն նահանգապետը նրանց բողոքը թողեց անհետևանք[56]։

1895 թ. մարտին նման բողոքով հանդես եկան նաև Շարուր-Դարալագյազի գավառի Բաշքենդ գյուղի բնակիչները։ Նրանք գրում էին նահանգապետին, որ թեև իրենք չէին համաձայնվել գյուղում վերաբաժանում անցկացնել, այնուամենայնիվ ագրեսիկ համագյուղացիները կատարեցին այն և «լավ մշակված տարածությունները վերցրին իրենց կամ տվեցին ազդականներին, իսկ անպետք հողերը թողեցին սակավաուժ և աղքատ գյուղացիներին»[57]։ Բաշքենդցիները պահանջում էին վերացնել կատարված վերաբաժանումը և վերականգնել հին հողօգտագործումը։ 1895 թ. ընթացքում նրանք մի քանի խնդրագիր հղեցին նահանգապետին, բայց վերջինս մերժեց նրանց պահանջը։

Աշխատավոր գյուղացիությունը անդիջում պայքար էր վարում հարուստների ու կուլակների դեմ նաև այն ժամանակ, երբ վերջիններս, վերաբաժանումներից բացի, համայնական հողերին տիրանում էին այլ ճանապարհներով։ Այսպես, 1895 թ. փետրվարին Երևանի գավառի Կարակշլակ գյուղի բնակիչները բողոքում էին, որ իրենց հարուստ համագյուղացիները, հանդես գալով համայնքի անունից, կառավարությունից գյուղի համար արոտավայրեր են ստացել, որոնցից օգտվում են միայն իրենք։ Կարակշլակցիները պահանջում էին հանձնել արոտավայրերը ամբողջ համայնքի օգտագործմանը, բայց նրանք արդյունքի չհասան[58]։ Նման բողոքով հանդես եկան նաև Երևանի գավառի Մեծ Բրուրի գյուղի բնակիչները. այս գյուղի հարուստ և ազդեցիկ մարդիկ համայնքի անունով իշխանություններից վերցրած արոտավայրերը

---

54 Նույն տեղում, գ. 832, 833, 837, 847, 848, 876, 1068, 270, 300, 341, 390, 674, 574, 589, 599, 1054, 92։

55 Նույն տեղում, գ. 230, թ. 15։

56 Նույն տեղում։

57 Նույն տեղում, գ. 253, թ. 5։

58 Նույն տեղում, ֆ. 133, ցուց. 1, գ. 1950, թ. 9։

նույնպես բաժանել էին իրար մեջ և թույլ չէին տալիս մյուսներին օգտվելու դրանցից։ Նահանգապետը այդ բողոքը մատնեց անուշադրության[59]։

Աշխատավոր գյուղացիները հարուստների դեմ ծառանում էին նաև այն ժամանակ, երբ վերջիններս բռնագրավում էին համայնական հողերը։ 1896 թ. հունիսին Երևանի գավառի Վարմաղիար գյուղի բնակիչները, դիմելով պետական ունեցվածքների Երևանի նահանգի ու Կարսի մարզի լիազորին, նշում էին, որ իրենց համագյուղացիներից չորս ունևորներ, առանձնանալով գյուղից, զավթել են համայնքի հողերի մի մասը և վարմաղիարցիների մեծամասնության գրկել արոտավայրից։ Նրանք պահանջում էին հափշտակիչներից ետ վերցնել հողերը և հավասարապես բաժանել բոլոր տնտեսությունների միջև։ Բայց գյուղացիների պահանջը մնաց անհետևանք[60]։

Ընկնելով տնտեսական ծանր կացության մեջ, գյուղացիները շատ հաճախ ստիպված էին լինում իրենց հողաբաժինները էժան գնով վաճառել հարուստներին, բայց նրանք չէին հաշտվում այդ կորուստի հետ և ամեն կերպ աշխատում էին ետ ստանալ հողերը, դիմելով ցարական պաշտոնյաների միջամտությանը։ Այդ դիմումները սովորաբար մնում էին անհետևանք։ Այսպես, 1892—1894 թթ. սովի ու անբերրիության տարիներին Նոր Բայազետի գավառի Նոր Քաղսի գյուղի բնակիչները ստիպված էին իրենց հողաբաժինների մեծ մասը վաճառել կուլակներին, բայց հետո չկարողացան ետ գնել դրանք, որովհետև նահանգապետը անհետևանք թողեց նրանց պահանջը[61]։ 1895 թ. նման հարցով իշխանություններին դիմեցին նաև Երևանի գավառի Ներքին Շենգավիթ գյուղի բնակիչները, բայց նրանք ևս պատասխան չստացան[62]։

Ընդհանրապես պետք է նշել, որ դարավերջին Արևելյան Հայաստանի գյուղերում առաջացել էին հողազուրկ զանգվածներ, որոնք ասլրուստի միջոց չգտնելով, հաճախ էին դիմում ցարական պաշտոնյաներին և հող պահանջում, սակայն ապարդյուն[63]։

Արևելյան Հայաստանում գյուղացիական շարժումները հաճախ ընթանում էին նաև ցարական պաշտոնյաներին դիմագրավելու, կալվածատերերի ու կուլակների ունեցվածքը հրդեհելու կամ նրանց ցանքատարածությունները ավերելու ձևերով։ Պաշտոնական տեղեկություններով, Երևանի նահանգում միայն 11 տարվա ընթացքում (1887—1898) իշխանություններին դիմադրավելու և հասարակական «անդորրը» խանգարելու դեպքերը 9-ից հասան 86-ի, իսկ դրանց համար դատապարտվածների թիվը՝ 6-ից 100-ի[64]։ Համարյա նույն տեմպերով աճեցին նաև հրկիզումները, որոնք 1871—1898 թթ. ընթացքում 14-ից հասան 107-ի[65]։ Հրկիզումներ առաջվա նման շատ էին լինում Երևանի ու Էջմիածնի գավառներում, որոնք հանդիսանում էին նահանգի կալվածատիրական հողատիրության հիմնական շրջանները։ Հրկիզումները քիչ չէին պատահում նաև կալվածատիրական հողատիրությունից զուրկ Ալեքսանդրա-

59 Նույն տեղում, ֆ. 94, ցուց. 5, գ. 633, թթ. 1—2։

60 Տե՛ս «Крестьянское движение в Армении...», էջ 376։

61 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ցուց. 5, գ. 306, թթ. 3—8։

62 Նույն տեղում, գ. 115, թթ. 2—8։

63 Նույն տեղում, գ. 182, թթ. 1—8։

64 Տե՛ս «Обзор Эриванской губернии», 1887, вед. № 5, 1898, вед. № 5а.

65 Տե՛ս «Сборник сведений о Кавказе», т. IV, Тифлис, 1878, էջ 48—49, «Сборник статистических сведений по Закавказскому краю», ч. I, Тифлис, 1902, էջ 88—93։

պոլի գավառում։ Դրանք այստեղ ուղղված էին գյուղի ունևորների ու կուլակների դեմ։

Այսպիսով, գյուղացիական ընդվզումներն Արևելյան Հայաստանում 1890-ական թթ. երկրորդ կեսերին ընդգրկում են ավելի մեծաթիվ զանգվածներ։ Նոր ուժով է ծավալվում «սոցիալական երկրորդ պատերազմը»՝ հակամարտությունները գյուղի ունևորության ու պրոլետարական ու կիսապրոլետարական տարրերի միջև։ Այդուհանդերձ, 1890-ական թթ. երկրորդ կեսին ևս գյուղացիական շարժումներն Արևելյան Հայաստանում դեռևս թույլ էին, անկազմակերպ ու շարունակում էին արտահայտվել առավելապես պասիվ ձևերով։ Դա բացատրվում էր նրանով, որ տրդյունաբերական պրոլետարիատը իրեն դաստակերդ նոր էր ձևավորվում, մարքսիստական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները բացակայում կամ համարյա բացակայում էին, կալվածատիրական հողատիրությունը քիչ էր, իսկ պետականը՝ գերիշխող։ Գյուղացիները դեռ հավատում էին, որ ցարական վերադաս պաշտոնյաների օգնությամբ կարող են դուրս գալ ստեղծված իրավիճակից։

КРЕСТЬЯНСКИЕ ВОЛНЕНИЯ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В 1895—1900 гг.

Доктор историч. наук А. С. АМБАРЯН

(Резюме)

Крестьянские волнения в Восточной Армении были составной частью всероссийской крестьянской борьбы, развернувшейся с новой силой в конце 90-х годов главным образом против многочисленных пережитков феодальных отношений. Выступления армянских крестьян в это время проявлялись в самых различных формах, но преобладающими все еще были пассивные формы. Это было обусловлено слабым развитием промышленного пролетариата, почти полным отсутствием марксистских социал-демократических организаций, небольшим удельным весом помещичьего землевладения в Восточной Армении и т. д.